# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ար.մեդտեխնիկա ՍՊԸ-ն ԵԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | Tellyes | Guardian Child, TYE9046 | 5 տարեկան երեխայի մանեկեն՝ սիրտ-թոքային վերակենդանացման ուսուցման համար՝ ծրագրակազմով Հինգ տարեկան երեխայի մանեկեն, որը պետք է նախատեսված լինի սիրտ-թոքային վերակենդանացման (ՍԹՎ) հիմնական հմտությունների զարգացման, գնահատման և ամփոփման համար, գործողության տվյալները կորող են ցուցադրվել իրական ժամանակում: Առնվազն հետևյալ հմտությունների ուսուցում՝ Ծանոթացում անատոմիային ՍԹՎ նպատակի և սկզբունքների հեշտ ըմբռնում, ուսուցման որակի բարելավում՝ իրական ժամանակում հետադարձ կապի միջոցով Կրծքավանդակի սեղմում Բերանից բերան օդափոխություն/Պարկ-փական դիմակով օդափոխություն (BMV) Գլխի թեքում/Կզակի բարձրացման մանևր Ծնոտի հրում Հատկանիշներ՝ Մանեկեն՝ 1) Իրատեսական երեխա՝ ճիշտ անատոմիական կառուցվածքներով և շոշափելի ոսկրային նշագծերով, ներառյալ մանուբրիում (manubrium sterni), կող , սիֆոիդ պրոցես (xiphoid process) և այլն: 2) Շարժուն պարանոց և վերջույթներ՝ փափուկ և իրատեսական զգացողությամբ 3) Շնչուղիները հնարավոր է բացել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կատարելով գլխի թեքում- կզակի բարձրացում և ծնոտի հրում: Պետք է հնարավոր լինի որոշել շնչուղիների բաց են թե ոչ: 4) Օդափոխությունը կարող է իրականացվել բերանից բերան և պարկ-փական-դիմակով /ամբու պարկի միջոցով/: Թիդալ ծավալը կարող է հայտնաբերվել և գնահատվել ավտոմատ կերպով: 5) Սեղմման դիրքը որոշվում է պտուկի գծով: 6) Սրտանոթային վերակենդանացման ժամանակ սեղմման տվյալները կարող են ցուցադրվել իրական ժամանակում: Կարող են հայտնաբերվել սեղմման խորությունը և հաճախականությունը, սեղմումների քանակը, սեղմման դիրքը, կրծքավանդակի ամբողջական հետվերադարձը: 7) Մանեկենը ապահովում է կրծքավանդակի ոչ պակաս, քան 100 000 սեղմում: 8) Ձեռքով շոշափելի քնային զարկերակի հաճախականություն(carotid pulse), զարկերակի ինտենսիվության և հաճախականության կառավարմամբ 9) Ներկառուցված լիթիումային մարտկոցի առկայություն, ոչ պակաս, քան՝ 4 ժամից ավելի անընդհատ աշխատաժամանակով 10) Անլար դիզայն Ծրագրային ապահովում՝ 1) QR կոդի առկայություն, որը թույլ է տալիս օգտատերերին արագ մուտք գործել կառավարման համակարգ, առանց տեղադրման անհրաժեշտության: Պետք է հնարավոր լինի սկանավորել և օգտագործել ցանկացած տերմինալով, ինչպիսիք են բջջային հեռախոսը, պլանշետը, համակարգիչը և այլն, պետք է համատեղելի լինի Windows, Android և այլ հիմնական օպերացիոն համակարգերի հետ: 2) Երկու ռեժիմի առկայություն՝ հրահանգչի ռեժիմ և ուսուցանողի ռեժիմ: · Սիրտ-թոքային վերակենդանացման ուսուցում(մարզում)՝ իրական ժամանակում գործողությունների տվյալների ցուցադրմամբ և օբյեկտիվ գնահատմամբ: · Թրեյնինգի տևողությունը կարող է հարմարեցվել: 3) Ուսուցիչը կարող է սահմանել գնահատման չափանիշներ կամ դժվարության աստիճան՝ տարբեր մակարդակի ուսանողների համար նախատեսված վերապատրաստման պահանջների համապատասխան: 4) Մարզման ընթացքում գործողության տվյալները, ինչպիսիք են սեղմման խորությունը, հաճախականությունը, դիրքը, շնչուղիների բացումը պետք է ցուցադրվեն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | իրական ժամանակում: Օգտատերերը կարող են դիտել մանրամասները, ինչը կօգնի շտկել սխալ գործողությունը : 5) Բոլոր թրեյնինգների և գնահատման տվյալները կարող են ավտոմատ կերպով պահպանվել: Օգտատերերը կարող են դիտել որոշակի ուսուցման մանրամասները, ներառյալ ուսուցման ընդհանուր միավորները, ուսուցման ընդհանուր տևողությունը, ցիկլերի քանակը, սեղմումը, օդափոխությունը, շնչուղիների բացումը և այլն: 6) Հնարավոր է տվյալների վերարտադրում վերանայման, գնահատման և ամփոփման համար: 7) Հնարավոր է պահպանել և արտահանել արդյունքները: 8) Հնարավոր է ավտոմատ կերպով կարգավորել ժամանակը, որպեսզի արդյունքների ցանկում նշված ժամանակը համընկնի սարքի ժամանակի հետ: Քաշը ոչ ավել, քան 8 կգ Համալիր՝ Մանեկեն – 1 հատ Հոսանքի ադապտեր – 1 հատ Երաշխիքային ժամկետը՝ մատակարարման պահից սկսած առնվազն 12 ամիս: Ապրանքը նոր է և չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ар.Медтехника ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | марка | технические характеристики |
| 9 | | | |